Նախագծերի կառավարման ինստիտուտը (PMI) հիմնադրվել է 1969թվականին ԱՄՆ-ում և հանդիսանում է նախագծերի կառավարման ոլորտի առաջատար կառույցն աշխարհում: PMI-ի առաքելությունն է նախագծերի կառավարման մասնագետներին և գործատուներին տրամադրել գիտելիքի հարթակներ և ռեսուրսներ, կարիերայի երկարատև ուսուցում և մասնագիտական զարգացում, ինչպես նաև մասնագիտական հավաստագրեր: PMI-ը նախագծերի կառավարման ստանդարտի՝ Project Management Body of Knowledge (PMBOK)®և նախագծերի կառավարման ամենապահանջված միջազգային հավաստագրման՝ Project Management Professional (PMP)® հիմնադիրն է:

PMI- ի հայաստանյան ներկայացուցչության առաքելությունն է զարգացնել նախագծերի կառավարման մասնագիտությունը Հայաստանում՝ մասնագետների համայնքի ձևավորման, մասնագիտության մասով իրազեկվածության բարձրացման և ուսուցման հնարավորությունների միջոցով: